



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԸ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԲ. 16:

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1896

ԹԻՒ 4



ՋԱՅԼԱՄ

**ՋԱՅԼԱՄ**

Չայլամը ուղտի նմաներուն համար չորքոտանիները և թռչունները իրար կապակցող օդակը կոչուած է: Տաճիկ ուղտին և Չայլամին կուրծքին վրայ

պնդացած մանդէն մաս մը կայ, որուն կռթնած կը պառկին այս կենդանիները. երկուքին ալ սուքերը նման են կազմութիւնով. երկուքն ալ նման մկանունքով վիզ ունին. երկուքին ալ

ուտեստը նոյն է մեծ մասամբ, և երկուքն ալ անհաւատալի ըլլալու չափ երկար ստեն կրնան քալել առանց ջուր խմելու: Գարձեալ, Չայլամը երբեք չթռչիր. ոչ ալ երբեք կարող է

քիչիկ մը անգամ ինքզինք գեանէն վերցնել թեւերը գործածելով: Բայց տաճիկ ուղտին նման շատ սրընթաց ոտքեր ունի: Զայլամին բնիկ երկրին մէջ անոր հակիթներուն կեղեկները գրեթէ միակ գործածուած կարասին են: Զայլամին մէկ հակիթը երեք չորս լիար ծանրութիւն ունի և հասարակ հաւի քսանըչորս հակիթներուն հաւասար է: Երեսունըհինգ րոպէէն կը խաշուի, և եթէ կարծր ուղտի եռացող ջուրի մէջ աւելի երկար ժամանակ թողուելու է: Թարմ հակիթի մը գինը հինգ Անգլ. ոսկի է:

Զայլամի ազարակի մը պահապանը կ'ըսէ թէ շայլամը միակ կենդանին է զոր յաջողած չէ ընտանեցնել: Հասկըցուած է որ շայլամները եօթանասունըհինգ տարի կ'ապրին, և ոմանք կը կարծեն թէ կ'ապրին մինչև հարիւր տարի: Զայլամին բարձրութիւնն է իբր ութ ոտք, լողութիւնը և տեսողութիւնը շատ սուր է. և կը թուի թէ շայլամը այս երկու զգայարանները միայն ունի: Սրունքները շատ ուժեղ են, և անոր պաշտպանութեան միակ միջոցն են: Երբ շայլամը թշնամիի վրայ կը յարձակի, կից կը զարնէ, բայց միշտ դէպ առաջ կը զարնէ և երբեք դէպ ի ետ չզարնէ:

Զայլամի ընտիր փետուրները անոր թեւերուն վրայ միայն կը գտնուին: Հանուած փետուրները իրարմէ կը զանազանին գնով: լիարը հինգ Անգլ. ոսկիէն մինչև վաթսուըն ոսկի կ'ըլլայ: Մէկ լիար փետուրը եօթանասունէն մինչև իննսուըն հատ կ'ըլլայ: Մէկ շայլամը քիչ անգամ տասներկու ընտիր փետուրներ կու տայ. և եթէ թռչուններն իրենք ազնիւ տեսակէ են, զոյգը մինչև երկու հարիւր Անգլ. ոսկի կ'արժէ:

—◆—  
ԿՈՅՐ

Իգիպտացի կոյրի մը պատկերն է այս. բայց երբ վրան կը նայինք, բնականապէս մեր միտքը կու գայ կոյր ծնած մարդը որուն պատմութիւնը կը գտնուի Յովհաննու Աւետարանին թ. գլխուն մէջ:

Առաւօտեան արեգակին զեղեցիկ լոյսը որ կը ցոլանայ անոր պատուտած հանգերձներէն, անոր ֆիզիքական խաւարը աւելի թանձր կը ցուցնէ:


Այս կոյրը այն վաղեմի կոյրին նման դուրս կ'ելլէ ամէն օրուան սովորութեանը պէս մուրալ սկսելու: Սուրբ Գիրքին մէջ յիշուած այն կոյր ծնած մարդը յաճախ երուսաղեմի մեծ տա-

ճարը կ'երթար, կը սպասէր որ տաճար մանող ելլողները ողորմութիւն տային իրեն, և նոյն ժամանակը ունկրողութիւն կ'ընէր տաճարին զրեթէ չվերջացող պաշտամունքին:

Հաւանականապէս հետեւեալներուն

Աստուածը և Հայրը:՝ Կ'երեւակայեմ թէ կ'ըսէր, «Երանի թէ դթար ինձ նման կոյր և անպիտան արարածի մը. բայց ես զօրաւոր եմ և երկար ատեն պիտի ապրիմ և մուրամ:»

Մինչ իր սիրտը լեցուն էր այսպիսի



ԿՈՅՐ ՄԸ

նման խօսքեր կ'իյնային միտքը և մտածութեան նիւթ կ'ըլլային իրեն: «Օրհնեալ ես դուն որուն խօսքովը աշխարհ ստեղծուեցաւ: Օրհնեալ ես դուն որ ստեղծեցիր ամէն բան ոչինչէն: Օրհնեալ է այն՝ որ գթութիւն կը ցուցնէ երկրի վրայ, օրհնեալ է այն՝ որ կը զթայ իր արարածներուն վրայ, օրհնեալ ես դուն, ամենուն զթած

խորհուրդներով, և աչքը կոյր՝ ամէն բաներու, իր սուր ականջները լսեցին անցորդներուն քայլերուն ձայնը:

Լսեց, կը կարծէք, այսկերտներուն ձայները որ հարցուցին Յիսուսի և ըսին, «Ռարբի, որունն է մեղքը, ասո՞ր թէ իր ծնողացը, որ անիկա կոյր ծնաւ:» Մինչ զլուրը կուրծքին վրայ ձուած կը մտածէր, «Կս պէ՞տք

է որ պատժուիմ, ես որ անմեղ եմ և չունիմ մաս կոյր ծնելուս պատճառ եղող յանցանքին մէջ” լսեց Յիսուսի պատասխանը, “Ոչ ատորն է մեղքը, ոչ ալ իր ծնողացը, հապա որ Աստուծոյ գործքերը ատոր վրայ յայտնի ըլլան: Քանի որ ես աշխարհի մէջ եմ, աշխարհի լոյսն եմ:” Մարդը վերցուց գլուխը, և ձայնին կողմը անկելով իր չտեսնող աչքերը, կրկնեց, “Աշխարհի լոյսը:”

Եւ ահա պաղուկ և կակուղ կաւին դպչելն զգաց իր փոսն ինկած աչքերուն վրայ, և լսեց խորհրդաւոր ձայն մը որ կ’ըսէր, “Գնա՛ լուացուէ Սելովամի աւազանին մէջ:” Տեսած չէր խօսողը, բայց յետոյ լսեց թէ

կարդալ սորվեցան. և հիմա քրիստոնեայ կոյրեր կենաց խօսքը կը քարոզեն մինչ կը նստին ճամբաները:



ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԱԿՅՈՒ

Փոքր աղջիկ մը տեսնելով որ իրենց սպասաւորը հացի փշրանքները կրակը կը նետէ, “Չե՛ս գիտեր որ Աստուած հոգ կը տանի ճնճողիներուն,” ըսաւ: “Եթէ Աստուած անոնց հոգ կը տանի, մենք պէտք չէ որ մեզ նեղենք անոնց համար,” պատասխանեց սպասաւորն անհոգութեամբ: “Բայց,” ըսաւ փոքր աղջիկը, “ես աւելի կ’ուզեմ Աստուծոյ նմանիլ, և հոգ տանիլ փոքրիկ թըռչուններուն՝ քան ցրուել կամ պարագ տեղը վատնել մեզի տուած ուսելիքը:”



ԱՅՈՑ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՅ ԿԱՐԳԱՅՈՂՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ

այն մարդը Յիսուս կը կոչուէր: Եւ զարմանալի՞ է որ Սելովամի աւազանին մէջ կաւը լուսիչն ետքը այս կոյրը աշխարհի առջև ներկայացաւ, պատրաստ՝ Յիսուսը ընդունելու ինչ ալ որ պատահէր: Չե՛նք կրնար գրեթէ լսել անոր հեգնութեամբ ըսելը Հրէից կրօնական ժողովին և կայիափա քահանայապետին, “Ստիկա է զարմանալու բանը՝ որ դուք չէք գիտեր թէ ուսկից է, և անիկա իմ աչքերս բացաւ: Աշխարհիս սկիզբէն ի վեր լուսած չէ որ մարդ մը կոյր ծնածի մը աչքերը բացած է:” Ասոր վրայ ժողովը բարկացաւ և ի սպառ դուրս ըրաւ զանիկա տաճարէն:

Ճամբորդեցէք ուր որ կ’ուզէք, աշխարհիս որ և իցէ կողմը, և ամէն տեղ կոյր մուրացիկի պիտի հանդիպիք: Վերջերս Չինաստանի մէջ կոյրերը

Այնուհետև զգուշութեամբ հաւաքեց մնացած փշրանքները և պատուհանէն դուրս նետեց: Քիչ մը ետքը քանի մը փոքրիկ թռչուններ փափաքով հոն եկան և ժողովեցին աղջկան նետած փշրանքները:

Անկէ ետև աղջիկը ամէն օր փոքրիկ կողովի մը մէջ կը հաւաքէր սեղանէն ինկած հացի փշրանքները ու կտորները, և պատուհանէն դուրս կը նետէր փոքրիկ թռչուններուն համար, և բոլոր ձմեռը այս փոքրիկ արարածները կանոնաւոր կերպով կու գային ամէն ճաշէ ետև մասնակցելու համար այս կերպով իրենց համար պատրաստուած ճաշին:



ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՅ ԿԱՐԳԱՅՈՂ ԿԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ Մեր բոլոր ընթերցողներն ալ իս-

կոյն կը հասկընան թէ պատկերին մէջ տեսնուած համակրելի դէմքերը ո՛ր ցեղին կը վերաբերին: Չինացի՞ են, կ’ըսէք: Այո, Չինացի կիներ են, բայց կուսակալ կիներ չեն: Անոնց համակրելի զուարթ դէմքերը և հանդըստաւէտ մուճակներ հազած ոտքերը մեզ տարակոյսի մէջ չեն թողուր նոնց նկատմամբ:

Անոնք խուճի մը կիներ են որոնք Բրիտանոսն ընդունած են և սիրով լի սիրտերով իրենց ժամանակը նուիրած են Բրիտանոսով փրկութեան աւետիսը հաղորդելու իրենց երկրին կանանց, որոնք տակաւին տգէտ են Անոր սիրոյն և իւրաքանչիւր մարդկային հոգւոյ համար Անոր վճարած գնոյն:

Չինաստանի Բրիտանոսայ շնորհ փոքրիկ աղջիկները երբ ութ տարեկան կ’ըլլան, սովորութիւն է անոնց ոտքին մատերը ոտքին տակը դարձնելով կապել, կապը ամէն օր կ’ամուրցուի, այնպէս որ փոքրիկ աղջիկները ամիսներով չարչարանք կը քաշեն, լոկ որպէս զի անոնց ոտքերը մանր ըլլան: Չինացիք անոնց ոտքերը “երեք մասնաշափ ոսկի շուշաններ” կը կոչեն: Կը կարծեն թէ անշնորհք բան մը կ’ըլլայ եթէ թող տան որ անոնց ոտքերը ընական կերպով մեծանան: Մէկ երկու տարի չարչարանքը այնպէս մեծ կ’ըլլայ որ խեղճ աղջիկները չեն կրնար իրենց ոտքերով գետինը կոխել: Անկէ ետքը ա՛լ չեն կրնար քարել առանց ցաւի:

Կը պատմուի թէ անգամ մը նաև մը գետէն կ’իջնէր դէպ ի Չինաստանի Ամոյ քաղաքը: Նաւուն մէջէն ճամբորդ մը շուրին վրայ լողացող տարօրինակ աման մը տեսաւ որուն մէջէն լացի ձայն կը լսուէր: Նաւաւորը ուզեց նաւը առաջ քշել առանց հոգ ընելու թէ այն լողացող ամանին մէջ ի՞նչ կար, բայց ճամբորդը պնդեց որ հասկցուի թէ ի՞նչ էր անոր մէջինը: Երբ ամանը բացուեցաւ, ահա մէջը սիրուն փոքրիկ աղջիկ մը կար զոր ծնողքները նետած էին որպէս զի կորուէր: Այն փոքրիկ աղջիկը Բրիտանոսներուն մէջ մեծցաւ, և եղաւ ուրիշներու Աստուածաշունչ կարդացող մը՝ պատկերին մէջ տեսնուածներուն նման:

Այս կիները ի՞նչ օրհնեալ արտօնութիւն ունին փրկութեան և մեղքէ ազատութեան աւետիսը տանելու իրենց քոյրերուն, որոնք ֆիզիքայէս և հոգեօրայէս կը չարչարուին նախապաշարման և մեղքի գերութեան ներքեւ:

ԿԱՅՄԱՐՈՒՄԻ ՄԸ ԿԱՐԵՎԻՑ ՍԵՐՏԸ

Յըբտէրիք կայարուհին, վիթթորիա թագուհին դուստրը և Գերմանիոյ վիլհէլմ Բ. կայսրին մայրը, իր ամուսինին մահէն ետև յաճախ այցելու թեան կ'երթար Պերլին Սբ. Յովսեփայ հիւանդանոցը: Հիւանդ մը, որ շատ ուշ հոն բերուած էր Տր. Գոխի հիւժախտի համբաւաւոր դեղովը դարմանուելու, մահուան դուռը հասած էր, և անոր կինը աճապարանքով քովը կանչուած էր: Կինը, մանկիկը բազուկներուն մէջ, վեր վար կը պարտէր սրահին մէջ որ ճիշդ քովը էր այն սենեակին ուր պառկած էր ամուսինը: Կայարուհին որ այդ միջոցին հիւանդանոցը այցելելու եկած էր, տեսնելով խեղճ կինը դառն վշտի մէջ, անոր մօտեցաւ և քանի մը կարեկցական հարցումներ ըրաւ:

«Մյո, մեռնելու վրայ է՞» ըսաւ կինը հեկեկալով, «և կ'ուզէ ինձի շատ մը բաներ խօսիլ թէ ի՞նչ ընելու եմ՝ իր մեռնելէն ետքը, թէ աղաքը ի՞նչ պէս մեծցընելու եմ. այս մանկիկը աղէկ չէ և կու լայ, և ամուսինս այնքան տկար է որ չկրնար դիմանալ այս վիճակին մէջ տեսնելով մանկիկը, և ուստի կրնայ մեռնիլ շուտով:»

Կայարուհին իսկոյն իր բազուկներուն մէջ առաւ մանկիկը. և, մինչ կինը իր մահամերձ ամուսինն քով կը նստէր, ամբողջ ժամ մը նորին վեհափառութիւնը կերակրեց մանկիկը և դրկած պարտցուց սրահին մէջ և հանդարտեցուց զանիկա մայրական բոլոր խանդաղատանքով:

ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԸ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուս կ'ուզէ որ «երթաք և պըտուղ բերէք:»

Հետեւեալ պատմութիւնը կը ցուցնէ թէ կոչիկ ներկող մը ի՞նչպէս պտուղ բերաւ Յիսուսի համար. «Յաջողութիւն ունեցա՞ր, Յակոբ», ըսաւ Գէորգ: «Միջակ», պատասխանեց Յակոբ: «Ի՞նչ սակայն ամենէն յաջող շաբաթն էր այս: Գուն ի՞նչ ըրիր, Գէորգ:» «Գէջ է գործս. այսպէս գէջ եղած չունէր. բոլոր օրը բազմութիւնը քովէս կ'անցնի, կը դառնայ, բայց միայն վաթսուն փարա չահած եմ», դժգոհութեամբ պատասխանեց Գէորգ: «Ի՛հ, այդչափն ալ բաւական է», ըսաւ Յակոբ: «Մայրդ տակաւին հիւանդ է:» «Մյո, և քանի կ'երթայ կը ծանրանայ. ուտելու բաւական բան չունի. հիմա չկրնար գործել. մենք

մեզի համար բաւական ուտելիք չունինք:» Պատանիին աչուրները արցունքով լեցուեցան, բայց կ'ամչնար աւտոր համար, և մէկ կողմ դարձաւ պատուած մաշած թեղիներովը արցունքը սրբելու համար: Յակոբ սկսաւ մատներով խառնել իր տանոցները մինչ Գէորգ կը խօսէր: «Գէորգ, առասոնց մէջէն, ես կրնամ տալ, մենք ձեզի չափ նեղը չենք: Հայրս երէկ գործ գտաւ:» «Ո՛հ, որչափ բարեսիրտ ես, Յակոբ», ըսաւ Գէորգ. շիտակ չէ որ ես ստակ առնեմ քեզմէ, բայց պիտի ջանամ օր մը քեզի վճարել:» Տղաքը մէկտեղ գացին, և շուտով հասան դրան մը առջև որ պարտէղի մը մէջ կը բացուէր: Անկէ մարդ մը դուրս ելաւ: «Չեզմէ ո՞վ էր որ իր ընկերին ստակ փոխ տուաւ քիչ մը առաջ», ըսաւ: «Մյո», ըսաւ Գէորգ. Յակոբը ցուցնելով: «Ինք դիւ լաւ կը ճանչնայ:» «Չեռքդ ինձի տուր», ըսաւ մարդը Յակոբին, «կ'ուզեմ ձեռքդ սեղմել, դուն ազնիւ տղեկ մըն ես:» «Չոգ չէ», ըսաւ մարդը, երբ տղան իր ձեռքը ցնցոտիներով կը սրբէր մարդուն երկնցներէն առաջ: «Ի՞նչ հող չեմ ըներ այդ տեսակ աղաք: Հիմա երկուքդ ալ հետս եկէք, և ձեզի լաւ ճաշ մը տամ: Կ'ուզեմ նաև երթալ տեսնել քու հիւանդ մայրդ: Բժիշկ եմ և թերևս կրնամ դարման մը ընել անոր: Ես պատին միւս կողմը կը գտնուէի երբ կը խօսակցէիք իրարու հետ. և այս կերպով իմացայ հիւանդ մօրդ վրայով:»

Մյո բժիշկը այնպէս շարժուեցաւ Յակոբի մարդասիրութենէն, որ այնուհետև իր կեանքը քրիստոնէական գործերու նուիրեց: Տեսէք, փոքրիկ բարիք մը ի՞նչպէս պտուղ բերաւ Յիսուսի համար: Չէք ուզեր ծաղիկի և պտուղ բերել Անոր համար: Միշտ միտք պահեցէք թէ Յիսուսի համար կատարուած ամենէն փոքր գործն անգամ պատուական է անոր առջև:

ԼՐԱԳԻՐ ՅՐՈՒՈՂ ՇՈՒՆ ՄԸ

Ամերիկեան մեծ քաղաքներէն մէկուն մէջ քանի մը տարի առաջ ճոն Պէլ անունով մարդ մը կար, որ ամէն օր սովորութիւն ըրած էր նախաճաշն առաջ առտուան լրագիրները ցրուել տունը: Մյո մարդը ամէն օր շատ հեռի տեղեր երթալու և շատ մը լրագիրներ բաժնելու էր, և եթէ չունենար մասնաւոր դիւրութիւն մը՝ չեմ կարծեր թէ կարող պիտի ըլլար ընել այդ գործը: Բայց

ունէր օգնական մը: Ո՞վ էր կը կարծէք այդ օգնականը: Իր չունը, թակ: Թակ միայն մէկ ամսու էր երբ ճոն զայն փողոցը գտաւ ձմեռուան ցուրտ առաւօտ մը: Որովհետև կ'երևէր թէ չնկը բնակարան չունէր և դուրս մնացած էր, ճոն իր տունն առաւ զանիկա: Շնիկը յետոյ շատ օգտակար եղաւ մարդուն: Վասն զի երբ քիչ մը մեծցաւ և զօրացաւ, սկսաւ իր տէրոջը հետ երթալ ամէն առտու երբ նա առաւօտեան լրագիրները կը ձգէր փողոցին վրայ դանուող տուները: Բայց ճոն չէր դիտեր թէ ամէն օր իրեն ընկերացող փոքրիկ կենդանին ի՞նչ մտացի բան էր: Չէր դիտեր թէ այս փոքրիկ անասունը կամայ կամայ կը սորվէր թէ լրագիրները ճիշդ ո՞ր տունը պէտք էր ձգել, և հաւանականապէս երբեք պիտի չգիտնար ասիկա եթէ առաւօտ մը սխալ մը գործած չըլլար:

Փողոցներէն մէկուն մէջ ուրկէ ճոն և չնիկը սովոր էին անցնիլ, երկու տուններ կային իրարու կից և ճիշդ իրարու նման: ճոն Պէլ սովորութիւն ունէր այս տուններէն մէկուն լրագիր մը ձգել ամէն առաւօտ: Կ'երևնայ թէ ուրիշ բանի մը վրայ կը մտածէր այդ ատեն, կամ թերևս վայրկեան մը մտցաւ թէ ո՞ր տունը ձգելու էր լրագիրը: Բայց պատճառն ի՞նչ ալ ըլլայ, լրագիրը սխալ տան առջևը ձգեց: Ու երբ յառաջ կ'անցնէր, թակի հաջելուն ձայնը լսեց, և տեսաւ որ չնիկը դրան աստիճաններէն վեր վազեց, լրագիրը բերանն առաւ և միւս տան դուռը վազելով հոն ձգեց լրագիրը:

Խորհեցէք հիմա թէ ճոն ի՞նչպէս զարմացած ըլլաւ է, և փոքրիկ թակը ի՞նչպէս հպարտութիւն զգացած ըլլաւ է: Մյո գէպքը ճոնի խորհել տուաւ թէ կրնար թակը շատ օգտակար կերպով գործածել իր գործին մէջ: Ուստի փողոցին մէկ կողմի տուններուն ինք կը ձգէր լրագիրները, և միւս կողմի տուններուն՝ թակ, ամէն անգամ մէկ տան համար զատ զատ գալով և լրագիրը տէրոջմէն առնելով:

Մյոպէս, կը տեսնէք որ, թակ եղաւ լրագրի ցրուիչ մը, և ճոն Պէլը վարձատրեց զինք փողոցէն առնել տուն տանելուն համար: Չեմ կարծիր թէ բնակարանի փոքր շնիկը

Ամերիկայի Մեծնաբայ Բրոքինգհոմի Պրեսը  
Արտօնատեր ձ  
Տնօրէն—Խմբագիր  
Ֆինանսընր Եղաշու

ԿՈՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՐ ՊՅՈԱՅԱՆ